

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՀԵՏՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЧРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL
GOVERNMENT AND PUBLIC SERVICE
EMPLOYEES OF ARMENIA

«18» փետրվարի 2020 թ.

N 19-01

**Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարար
պարոն Ռուստամ Բադալյանին**

Հարգելի պարոն նախարար

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում, ի թիվս այլի, գրանցվում են իրավաբանական անձանց հիմնադիրների կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը, բնակության, հաշվառման վայրի հասցեն, կապի պաշտոնական տվյալները՝ հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը և կապի այլ միջոցներ, եթե այդպիսիք ներկայացվել են գործակալություն): Նույն օրենքի հոդված 61-ով սահմանված է, որ պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար, և ամբողջական տեղեկությունները տրամադրվում են համատասխան տուրքի վճարման դեպքում կամ անվճար:

Հրավիրում ենք Ձեր ուշադրությունը այն փաստի վրա, որ այս կարգավորումները երրորդ անձանց հասանելի են դարձնում նաև արհեստակցական միությունների հիմնադիրների տվյալները, քանի որ արհեստակցական միությունները նույնպես ենթակա են պետական գրանցման, ինչպես այլ իրավաբանական անձիք և հասարակական միավորումներ: Սակայն,

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ով սահմանված է, որ արհեստակցական միության անդամակցությանը վերաբերող տեղեկությունները **հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են**, ուստի այդպիսի տվյալները երրորդ անձին տրամադրելը առանց տվյալների սուբյեկտի համաձայնության հնարավոր է միայն այն դեպքում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով և *ունի բավարար պաշտպանվածության մակարդակ*:

Հաշվի առնելով, որ արհեստակցական միությունները ստեղծվում են աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով, արհմիությանն անդամակցող անձանց գաղտնիությունը առավել ևս օրհասական է, քանի որ այդպիսի տվյալների հասանելիությունը ուղղակիորեն կարող է պատճառ դառնալ աշխատավայրում արհմիության անդամների իրավունքների խախտման, նրանց հանդեպ ոտնձգությունների, խոշտանգումների, ինչպես նաև գործատուի և աշխատողների կողմից խտրականության դրսևորումների: Հետհեղափոխական Հայաստանում կոլեկտիվ բանակցությունների վարման և վեճերի լուծման նոր մշակույթ է ձևավորվում և որոշ դեպքերում արհմիությունները նախընտրում են չբացահայտել իրենց անդամ աշխատողներին, գործատուի կողմից արհմիության վրա ազդելու հնարավորությունները հնարավորինս բացառելու նպատակով:

Այսպիսով, արհեստակցական միության անդամակցությանը վերաբերող տեղեկությունները հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են, որոնք այժմ փաստացի հասանելի են երրորդ անձանց համար և չունեն բավարար պաշտպանվածության մակարդակ: Ավելին՝ նման հասանելիությունը ակնհայտ վտանգավոր կարող է լինել ինչպես արհմիության անդամների, այնպես էլ արհմիության հետագա գոյության համար: Մարդու հիմնարար իրավունքներից գաղտնիության իրավունքը երաշխավորելու համար անհրաժեշտ է այնպիսի օրենսդրական կարգավորում, որը կարգելի իրավաբանական անձանց ռեգիստրի պետական գործակալությունից ստանալ արհեստակցական միությունների հիմնադիր-անդամների տվյալներ պարունակող տեղեկություններ:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Միավորման ազատության Հանձնաժողովի որոշումների, արհեստակցական միությունների գրանցման նպատակով հիմնադիր-անդամներից մանրամասն անձնական տվյալներ (մասնավորապես՝ հասցե և հեռախոսահամար) պահանջելը *հակասում է* ԱՄԿ-ի «Միավորման ազատության և կազմակերպման իրավունքի» (C087) հիմնարար Կոնվենցիային (ՀՀ-ի կողմից վավերացված է 2006 թ. հունվարի 2-ին): Ըստ Հանձնաժողովի որոշման՝ վերը նշված պահանջը խախտում է բնակչության հասցե կամ հեռախոսահամար չունեցող անձանց միջազգային նորմերով նախատեսված միավորվելու և կազմակերպման իրավունքը (տես՝ Հանձնաժողովի 363-րդ զեկույցի 2868 գործի 1005 պարբերությունը¹ և Հանձնաժողովի որոշումների 6-րդ հրատարակման ժողովածուի 433 կետը²): Այնինչ, ներկայումս պետական ռեգիստրի գործակալության դիմումներում պահաջվում է լրացնել նշված տեղեկությունները արհմիության հիմնադիր բոլոր անդամների համար, և այդ տվյալները թերի լրացնելու դեպքում դիմումները չեն ընդունվում:

Նույն Հանձնաժողովի որոշումներից մեկ այլը պնդում է, որ արհեստակցական միությունների պետական գրանցման ընթացքում պետական գործակալությանը տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը պետք է ապահովվի՝ արհմիության անդամների հանդեպ հնարավոր խտրականությունից խուսափելու համար (տես՝ Հանձնաժողովի 358-րդ զեկույցի 2734 գործի 697 պարբերությունը³ և Հանձնաժողովի որոշումների 6-րդ ժողովածուի 434 կետը⁴):

Ինչպես գիտեք, ԱՄԿ Միավորման ազատության Հանձնաժողովը Աշխատանքի միջազգային կազմակերպության ղեկավար մարմնի հանձնաժողովն է, որը ստեղծվել է 1951 թվականին, և որի գործառույթն է քննել ԱՄԿ անդամ

¹ Committee of Freedom of Association (CFoA) 363th Report, Case N.2868, para. 1005;
https://www.ilo.org/global/standards/subjects-covered-by-international-labour-standards/freedom-of-association/WCMS_159872/lang-en/index.htm

² Compilation of Decisions of CFoA, 6th edition, 2018, para. 433;
<https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:70001:0::NO::>

³ Committee of Freedom of Association (CFoA) 358th Report, Case N.2734, para. 694;

⁴ Compilation of Decisions of CFoA, 6th edition, 2018, para. 434;

պետություններից ստացված դեպքերն ու բողոքները և ներկայացնել կառավարություններին որոշումներ և առաջարկություններ դեպքերի իրավաչափության վերաբերյալ՝ ԱՄԿ հիմնարար կոնվենցիաներին համապատասխանելու տեսանկյունից:

Հաշվի առնելով վերը նշվածը, խնդրում ենք նախաձեռնել այնպիսի օրենսդրական մեխանիզմների մշակում, որոնք կերաշխավորեն պետական գրանցամատյանում եղած արհեստակցական միությունների հիմնադիր-անդամների տվյալների գաղտնիությունը և կարգելեն դրանք երրորդ անձանց փոխանցելը: Առաջարկում ենք նաև դիտարկել այդ տվյալներից որոշների գրանցումը ոչ պարտադիր դարձնելը:

Ի դեպ՝ Հանձնաժողովի որոշումներում կան նաև դրույթներ, որոնք սահմանում են, որ արհեստակցական միությունների պետական գրանցումը պետք է կրի ֆորմալ բնույթ և չառաջացնի զգալի խոչընդոտներ (գրանցման ժամկետ, գրանցման վճար, խիստ պահանջներ ներկայացվող փաստաթղթերի նկատմամբ, գրանցումը մերժելու հնարավորություն և այլն), որոնք ներկայումս առկա են:

Հուսով ենք, որ ներկայացված խնդիրները լուծումներ կստանան:

Հարգանքով՝

ՃՀՄ նախագահ

Ա. Ասատրյան